ՆՈՐ ԳՐՔԵՐ

Կ. Ս. ԿՈՉՄՈՅԱՆ, Կիրովական, *Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960 թ., 294 էջ, գինը 62 կ.։*

Սույն աշխատության մեջ լուսաբանված են Կիրովական քաղաքի պատմական անցյալը, Սովետական իշխանության տարիներին ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի, ինչպես նաև կուլտուրական շինարարության, աշխատավորների նյութական բարեկեցության և քաղաքաշինության ասպարեզում ձեռք բերված հաջողությունները։

Գ. ՉՅՈԴԱԿՅԱՆ—Ռոմանոս Մելիքյան *(կյանքը և ստեղծագործությունը), Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960 թ., 245 էջ, գինը 75 կ.։*

Սույն մենագրությունը նվիրված է սովետահայ ականավոր կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի կյանքին, երաժշտական-հասարակական գործունեությանը և ստեղծագործությանը։ Աշխատության մեջ ուսումնասիրված են կոմպոզիտորի հիմնական ստեղծագործությունները՝ սկսած վաղ շրջանի գործերից, վերջացրած մասսայական երգերի ժողովածուներով։ Հատուկ ուշադրություն է նվիրված գեղարվեստական ռոմանսի ժանրին, որտեղ վառ կերպով դրսևորվել է Ռ. Մելիքյանի ստեղծագործական դեմքը։

Գիրքը նախատեսված է երաժշտագետների և երաժշտասեր լայն հասարակայնության համար։

ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐՈՒՄ

Խմբագրությամբ Ի. Ա. Հուսեյնովի և Ա. Ն. Կողիևի։

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1960 թ., 191 էջ, գինը 34 կ.։

Գիրքը տալիս է Սովետական իշխանության համար Ադրբեջանական ժողովրդի մղած պայքարի հերոսական էջերը, Բաքվի ինտերնացիոնալ պրոլետարիատի հերոսական պայքարը Կոմունայի համար, Ադրբեջանական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկայի ստեղծման պատմությունը։

Գիրքը միաժամանակ ուրվագծում է ադրբեջանական ժողովրդի հերոսական պայքարի ե փառապանծ հաղթանակների քառասնամյա պատմությունը, պատմական այն հոյակապ նվաճումների պատկերը, որ Սովետական իշխանության քառասուն տարիների ընթացքում, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ղեկավարությամբ ձեռք է բերել ադրբեջանական ժողովուրդը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի ի գիտության բնագավառում։

Դրքում տեղ են գտել անգրկովկասյան ռեսպուբլիկաների եղբայրական բարեկամությունը և համագործակցությունը՝ այն միասնական պայքարում, որ նրանք մղում են հանուն կոմունիզմի կառուցման մեր երկրում։